Հավելված 2
«Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ
«Բանկային երաշխիքների
տրամադրման» կանոնակարգի

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Դիմում-հայտը լրացնելիս պահանջվող փաստաթղթեր

1. Դիմում-հայտ
2. Իրավասու մարմնի որոշում կամ քաղվածք որոշումից երաշխիք ստանալու և գրավ դնելու (գրավի առկայության դեպքում) վերաբերյալ (բնօրինակ)
3. Ընկերության կանոնադրություն՝ իր փոփոխություններով (բնօրինակ կամ կրկնօրինակ)
4. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից տրված վկայական՝ իր ներդիրներով՝ ներառյալ ընկերության տնօրենի վերաբերյալ տեղեկության ներդիրը, ՀՎՀՀ (բնօրինակ կամ կրկնօրինակ)
5. Ընկերության տնօրենի և 10% մասնակցությունը գերազանցող ֆիզիկական անձ հանդիսացող մասնակիցների անձնագիր և ՀԾՀ (կամ ՀԾՀ չունենալու վերաբերյալ տեղեկանք) կամ նույնականացման քարտ (բնօրինակ կամ կրկնօրինակ)
6. Տվյալ ոլորտում գործունեություն իրականացնելու համար թույլատրվող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝ լիցենզիաներ, սերտիֆիկատներ, հավաստագրեր և այլն (բնօրինակ կամ կրկնօրինակ)
7. Ֆինանսական հաշվետվություններ վերջին 2/երկու/ հաշվետու ժամանակաշրջանների համար (բնօրինակ կամ կրկնօրինակ)
8. Աուդիտորական կազմակերպության եզրակացություն (առկայության դեպքում) (բնօրինակ կամ կրկնօրինակ)
9. Տեղեկանքներ պարտքերի մասին (հարակային մարմիններից, սպասարկող բանկերից և դատարանից՝ անվճարունակության և դատական գործընթացի վերաբերյալ) (բնօրինակ)
10. Գործարար ծրագիր կամ տեխնիկա-տնտեսական հիմնավորում (բնօրինակ)
11. Բանկերում հաշիվների առկայության դեպքում՝ 12/տասներկու/ ամիսների բանկային հաշիվների շարժի քաղվածքներ (բնօրինակ)
12. Տեղեկանք ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրից կանոնադրության փոփոխության, տնօրենի և մասնակիցների վերաբերյալ, ինչպես նաև բաց բաժնետիրական ընկերության համար՝ կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրված, փակ բաժնետիրական ընկերության համար՝ բաժետերերի ռեեստր վարողի կողմից տրված տեղեկանք (բնօրինակ կամ կրկնօրինակ)
13. Այլ փաստաթղթեր Ընկերության պահանջով:

Անշարժ գույքի գրավադրման դեպքում՝

- գրավադրվող անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական (բնօրինակ),
- գրավադրվող անշարժ գույքի ձեռքբերման հիմքը (օրինակ՝ գնման-վաճառքի պայմանագիր, նվիրատվության պայմանագիր, ժառանգության վկայական և այլն) (բնօրինակ կամ կրկնօրինակ),
- գրավատուի անձնագիր և ՀԾՀ (կամ ՀԾՀ չունենալու վերաբերյալ տեղեկանք) կամ նույնականացման քարտ (բնօրինակ կամ կրկնօրինակ),
- գրավատուի ընտանեկան կարգավիճակը հաստատող փաստաթղթեր, ինչպիսիք են՝ ամուսնության վկայական, ամուսնության պայմանագիր, ամուսնալուծության վկայական և այլն (բնօրինակ)

- անշարժ գույքի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեյից ստացված միասնական տեղեկանք՝ գույքի նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ (բնօրինակ),
- տեղեկանք գրավադրվող գույքի հասցեում հաշվառված անձանց (բնօրինակ),
- ընկերության իրավասու մարմնի որոշում գույքը գրավադրելու մասին (բնօրինակ),
- գրավադրվող անշարժ գույքի նախնական գնահատման հաշվետվություն (բնօրինակ),
- այլ փաստաթղթեր Ընկերության պահանջով:

Դիմում-հայտը հաստատելուց հետո պահանջվող փաստաթղթեր

1. Անշարժ գույքի ապահովագրության պայմանագիր (առկայության դեպքում՝ ըստ ընկերության պահանջի) (բնօրինակ)
2. Գրավադրվող անշարժ գույքի գրավի իրավունքի գրանցման վկայական (բնօրինակ)
3. Նոտարական վավերացումներ, եթե պահանջվում է գործարքի տեսակից կախված (բնօրինակ)
4. Գրավադրվող անշարժ գույքի վերջնական գնահատման հաշվետվություն (բնօրինակ)
5. Այլ փաստաթղթեր Ընկերության պահանջով:

Ելնելով տարաբնույթ հանգամանքներից կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:

Ընկերությունը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով Ընկերությունը կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին: